ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. հուլիսի 1 -ին, N 145 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՇՂԱՐՇԻԿԻ Ա. ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՈՐԱՅՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Շղարշիկի Ա. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նորայր Մանուկյանի 2025 թվականի հուլիսի 1-ի դիմումը.

որոշում եմ՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Շղարշիկի Ա. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նորայր Մանուկյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 15-ը ներառյալ:
2. Նորայր Մանուկյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Շղարշիկի Ա. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Շղարշիկի Ա. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Տարոն Կարապետյանի վրա:
3. Նորայր Մանուկյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 18-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/3/2025 17:03:34 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ